# Արձանագրություն թիվ 1(4)

/Նիստը կայացել է 08.01.2025 թ.-ին/

Տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի Ռ.Եղոյանի անվան N1 ավագ դպրոց», «Արմավիրի ,,Տիգրան Մեծ,, ռազմական հատուկ վարժարան», «Մեծամորի Ս.Գալստյանի անվան վարժարան», «Վաղարշապատի Գր.Նարեկացու անվան N2 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Գորկու անվան N5 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Խորենացու անվան N10 ավագ դպրոց», ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստ:Նիստը վարում էր խորհրդի նախագահ Լիլյա Ասատրյանը:

ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամներից 13-ը (2 բացակա՝Արման Խաչատրյան, Լուսինե Ալեքսանյան): Խորհրդակցական ձայնով ներկա էին դպրոցների հաշվապահները:

**Օրակարգում՝**

1. ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի Ռ.Եղոյանի անվան N1 ավագ դպրոց», «Արմավիրի ,,Տիգրան Մեծ,, ռազմական հատուկ վարժարան», «Մեծամորի Ս.Գալստյանի անվան վարժարան», «Վաղարշապատի Գր.Նարեկացու անվան N2 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Գորկու անվան N5 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Խորենացու անվան N10 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ների 2025թ. տարեսկզբի մնացորդի և այդ մնացորդային ծախսերի նախահաշվին հավանություն տալու մասին հարցի քննարկում:

2. Ընթացիկ հարցեր

**Լսեցին.**

Օրակարգի միակ հարցի վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան վերոնշյալ դպրոցների հաշվապահները: Ներկայացվեցին 2025թ. տարեսկզբի համար պլանավորած մնացորդային գումարները: Դրանք մասնավորապես ներառում էին միայն 2025թվականի հունվար ամսվա կոմունալ ծառայությունների մատուցման համար նախատեսված վճարները:

Ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն,, ՊՈԱԿ-ների Օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 5-րդ ենթակետով և՝ հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի Ռ.Եղոյանի անվան N1 ավագ դպրոց», «Արմավիրի ,,Տիգրան Մեծ,, ռազմական հատուկ վարժարան»,

«Վաղարշապատի Գր.Նարեկացու անվան N2 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Գորկու անվան N5 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Խորենացու անվան N10 ավագ դպրոց», ՊՈԱԿ-ների հաշվապահների ներկայացրած 2025թ. տարեսկզբի մնացորդի ծախսերի նախահաշիվները.

**Որոշեցին.**

1. Հավանություն տալ հաշվապահների կողմից ներկայացված մնացորդային ծախսերի նախահաշվին:
2. Ծախսերի նախահաշիվը ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաստատմանը:

**ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի**

**նախագահ՝** (Լիլյա Ասատրյան)

**քարտուղար՝** (Հասմիկ Մովսիսյան)